

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,
ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ (ՎԱՃԱՌՔԻ) ՄՐՑՈՒՅԹԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմին) տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն), պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ ընկերություն), հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող և կազմակերպությունների սեփականությունը հաղիսացող գույքի (այսուհետ՝ պետական գույք) մրցույթային եղանակով վաճառքի հետ կապված հարաբերությունները:

2. Պետական գույքի վաճառքի մրցույթը կազմակերպում և անցկացնում է պետական գույքի կառավարման մարմինը (այսուհետ՝ կազմակերպիչ):

3. Պետական գույքի վաճառքի իրավական ակտով կարող են սահմանվել նաև մրցույթի հաղթողին որոշելու պայմանների գնահատման կշռային գործակիցներ:

4. Կազմակերպիչն ապահովում է մրցույթի անցկացման մասին ծանուցման հրապարակումն իր պաշտոնական և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի

Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում, ինչպես նաև սահմանում է մրցույթի մասնակցության վճարի չափը և այն հրապարակում մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ:

2. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

5. Եթե պետական գույքի վաճառքի մասին իրավական ակտով մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) չի ստեղծվել, ապա այն ստեղծում է կազմակերպիչը, որն իր գործունեությունն իրականացնում է սույն կարգին համապատասխան: Հանձնաժողովը պետք է կազմված լինի առնվազն 6 անդամից, որի կազմում ընդգրկվում են կազմակերպիչի (հանձնաժողովի նախագահ, երկու անդամ), համապատասխան պետական մարմնի (երեք անդամ) ներկայացուցիչներ (ընդ որում՝ կազմակերպությանը, ընկերությանը կամ հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված, կազմակերպության սեփականություն հանդիսացող գույքի դեպքում՝ մեկ ներկայացուցիչը պետք է լինի կազմակերպությունից կամ ընկերությունից կամ հիմնադրամից):

6. Հանձնաժողովը պետական գույքի վաճառքի մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման տեքստը և 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում հրապարակման: Հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում մրցութային հանձնաժողովն ընդունում է մրցույթի մասնակցության հայտերը, կազմակերպում և անցկացնում է գույքի վաճառքի մրցույթը, ինչպես նաև որոշում մրցույթի հաղթողին:

7. Հանձնաժողովի նիստն իրավագոր է հանձնաժողովի անդամների 2/3-ի մասնակցության դեպքում, իսկ հանձնաժողովի անդամների 2/3-ից պակաս լինելու դեպքում նշանակվում է նոր նիստ, ընդ որում, քննարկվում են միայն հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում և կարգով ներկայացված հայտերը: Հանձնաժողովը նոր նիստի օրվա և ժամի մասին պատշաճ տեղեկացնում է բոլոր հայտատուներին:

8. Հանձնաժողովը որոշումներ է ընդունում նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Եթե պետական գույքի վաճառքի մասին իրավական ակտով մրցութային պայմանների գնահատման համար կշռային գործակիցներ սահմանված չեն, ապա հանձնաժողովը կարող է սահմանել կշռային գործակիցներ և դրանք հայտարարել մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ:

10. Մրցույթի մասնակցության նախավճարի չափը սահմանվում է պետական գույքի վաճառքի մասին իրավական ակտով սահմանված նվազագույն վաճառքի գնի 5 տոկոսի չափով:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

11. Մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է հրապարակվի մրցույթի հայտերի ընդունման վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ, լիազոր մարմնի պաշտոնական և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում, եթե պետական գույքը մրցույթով վաճառելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

12. Մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- 1) մրցույթի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.
- 2) մրցույթի կազմակերպչի անվանումը.
- 3) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
- 4) մրցույթի հաղթողին որոշելու կարգը.
- 5) մրցույթով վաճառվող գույքի անվանումը, մրցույթի պայմանները և դրանց գնահատման կշռային գործակիցները (այդպիսիք սահմանված լինելու դեպքում).
- 6) մրցույթի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես՝

ա. գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ,

բ. մրցույթի նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերի պատճենները,

գ. իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի պատճենը,

դ. հայտատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),

ե. գործարար (ներդրումային) ծրագիրը,

զ. իրավաբանական անձանց համար նաև գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձևով գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ ներքին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնություն չի պահանջվում, կամ, որ պահանջվող համաձայնություններն ստացված են (կցելով այդ համաձայնագրերը)։

7) մրցույթի հայտերի ընդունման և բացման ժամկետները, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերի օրերը և ժամերը.

8) մրցույթի կարգին ծանոթանալու և դրա պատճենը տրամադրելու կարգը.

9) մրցույթի մասնակցության նախավճարի չափը, ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները, մրցույթի հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի հետ վերադարձման կարգը.

10) ծածկագրերը և դրանք կիրառելու կարգը (պետական գույքը մրցույթով վաճառելու մասին իրավական ակտով նախատեսված լինելու դեպքում).

11) վաճառքի մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ կարող են հրապարակվել լրացուցիչ տեղեկություններ:

13. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը պետք է դադարի մրցույթի սկսվելուց առնվազն երեսուն րոպե առաջ, եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

14. Մրցույթի պայմանների փոփոխման դեպքում հանձնաժողովը պարտավոր է մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն միջոցով, որով հրապարակվել է

մրցույթի մասին հրապարակային ծանուցումը, և, որի մասին անհատապես տեղեկացնել արդեն իսկ մասնակցության հայտ ներկայացրած անձանց: Հրապարակային ծանուցման մեջ թույլատրվում է կատարել փոփոխություններ և (կամ) լրացումներ, եթե դրանցով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում:

16. Մրցույթի մասնակցության հայտերը՝ մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում են ստանձված և ստորագրված ծրարով՝ անձամբ, փոստով՝ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային հասցեով: Փոստով ուղարկված հայտերը (ծրարները) ներկայացնելու ժամկետ է համարվում ծրարի՝ պետական գույքի կառավարման մարմին մուտքագրման օրը և ժամը: Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 18:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

17. Սույն կարգի 15-րդ և 16-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են հայտը ներկայացնողին:

18. Մրցույթի հայտատուները՝ մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերը ներկայացնելու կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «Փոփոխում» բառը: Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտի փոփոխության կամ վերադարձման մասին դիմումները ենթակա չեն քննարկման:

19. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում:

20. Մրցույթի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չափով ու ժամկետներում վճարում են մրցույթի մասնակցության նախավճարը՝

լիազոր մարմնի անվամբ բացված մրցույթի մասնակցության նախավճարի դրամային հաշվին:

21. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վճարված նախավճարն ընդգրկվում է մասնակցի առաջարկած՝ գույքի վաճառքի գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրվելու, հետագա վճարումները չկատարվելու և (կամ) պայմանագիր չկնքվելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում, և մրցույթը համարվում է չկայացած, իսկ վճարված նախավճարը լիազոր մարմնի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

22. Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցների, ինչպես նաև մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուների մրցույթի մասնակցության նախավճարը, մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, Կոմիտեի 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է հայտատուներին:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

23. Մրցույթի մասնակցության հայտերը բացվում են մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ նշված վայրում, սահմանված օրը և ժամին՝ մրցույթի մասնակցության հայտերի բացման նիստում:

24. Մրցույթի հայտատուները և նրանց լիազոր ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի մասնակցության հայտերի բացման, ինչպես նաև մրցութային առաջարկների քննարկման նիստերին և ծանոթանալ նիստերի արձանագրություններին:

25. Եթե հայտատուների կողմից եղել է առաջարկություն, ապա ծրարները կարող են գնվել հանձնաժողովի անդամների, մրցույթի հայտատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից:

26. Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ: Մրցույթային առաջարկները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոքր չլինեն պետական գույքի վաճառքի մասին իրավական ակտով սահմանված նվազագույն արժեքներից:

27. Հանձնաժողովը մրցույթի հայտերի բացման նիստում բացում է մրցույթի մասնակցության համար ներկայացված փակ ծրարները և հրապարակում

1) մրցույթի հայտ ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը (նախատեսված լինելու դեպքում) և անունը, ազգանունը (անվանումը).

2) մրցույթի մասնակցության հայտերի համապատասխանությունը հրապարակային ծանուցմամբ մրցույթի համար սահմանված պայմաններին.

3) ամփոփ տվյալներ՝ մրցույթի մասնակցության հայտերում փոփոխություն կատարելու մասին:

28. Այն հայտատուներին, որոնց հայտերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված պայմաններին, տրվում է մրցույթի մասնակցի կարգավիճակ:

29. Եթե հայտերի գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ մրցույթի համար սահմանված պայմանների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհամապատասխանությունները վերաբերում են գնային առաջարկին կամ գործարար (ներդրումային) ծրագրով առաջարկվող հաշվելի ցուցանիշներին, ապա հանձնաժողովը 1 աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Եթե մասնակիցը սահմանված ժամկետում շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

30. Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և ըստ կշռային գործակիցների առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:

31. Հանձնաժողովի անդամները ներկայացված առաջարկությունների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով իրավունք ունեն դիմելու մրցույթի մասնակիցներին կամ նրանց լիազոր ներկայացուցիչներին:

32. Հանձնաժողովը մրցույթի արդյունքներն ամփոփում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում և կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն:

33. Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

34. Հանձնաժողովի գործունեությունը համարվում է դադարած՝ մրցույթի վերջնական արդյունքներն ամփոփվելուց և դրա մասին արձանագրություն կազմվելուց հետո:

6. ՉԿԱՅԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՎԱՎԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ

35. Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1) մրցույթի մասնակցության համար ոչ մի հայտ չի ներկայացվել.
2) մրցույթի հայտատուներից ոչ մեկը մրցույթի մասնակցի կարգավիճակ չի ստացել.

3) մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չի ստորագրվել կամ հետագա վճարումները չի կատարվել, կամ պայմանագիր չի կնքվել.

4) արտակարգ իրավիճակի պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը:

36. Մրցույթի մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չի հանդիսանում մրցույթը չկայացած համարելու համար:

37. Մրցույթն անվավեր կարող է ճանաչվել դատական կարգով:

38. Դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերությանը:

39. Եթե մրցույթը համարվում է չկայացած, ապա այդ դեպքում գույքի վաճառքի նոր մրցույթը կազմակերպվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ